

քարտուղար տէր Յովհաննէսի՝ մեր վեհափառ թագաւորին Կաստիլյայի եւ պետական նօտար անոր պալատին եւ բոլոր երկրին մէջ, եւ վարը յիշուած վիհաներուն առջեւ — ներկայացան՝ Ապարիսիո Սանչէզ, վերատեսուչ (alcalde) արքայական պալատի, Մադրիդցի Դիէգո Ֆէրնանդէզ, ճորտ յիշեալ վեհափառ թագաւորին, եւ Կաստրոցի Դիէգո Ֆէրնանդէզ, քարտուղար յիշեալ վեհափառ թագաւորին, բնակիչք Մագրիդի եւ փոխանորդք նոյն քաղաքին, ինչպէս որ հաստատեցին իրենց ինքնութիւնը յայանող պաշտօնագրով մը, — թղթի վրայ գրուած եւ ստորագրուած նօտարէ, — զոր ներկայացուցին յիշեալ տէր Լեւոն թագաւորին, եւ որուն պարունակութիւնը հետեւեալն է .

« Ամէն անոնք որ այս թուղթը պիտի տեսնեն՝ գիտնան, որ մենք
 « Մադրիդի Քաղաքային Վարչութեան անդամներս՝ մեր սովորութեան
 « համեմատ քաղաքիս Սուբր Փրկիչ եկեղեցիի զանգակին հրաւերովը
 « ժողով գումարելով Յովհան Սանչէզ ու Յովհան Ռոզրիգէզ թաղա-
 « պետներու եւ քաղաքապահ (alguazil) Ժիլ Ֆէրրանդէզ-ի ներկայու-
 « թեամբ, նոյնպէս եւ Դիէգո Ալֆոնսո, Պերո Գոնզալէզ, Ժիլ Գարսիա,
 « Գոնզալո Բերմուդէզ ու Պերո Ալֆոնսո՝ ասպետներու, սեպուհներու
 « եւ ազնուականներու մասնակցութեամբ, — որոնք յիշեալ Վարչու-
 « թեանս հետ գործ ունին, — մեր վեհափառ թագաւորի ճորտ Մադրիդցի
 « Դիէգո Ֆէրրանդէզ-ի, Լագոցի Ալվար Ֆէրրանդէզ-ի, մեր վեհափառ
 « թագաւորի զաւակին՝ արքայազն (infante) տէր Ֆէրրանդո-ի սեղանա-
 « պետ Ալֆոնսո Գարսիա-ի, վեհափառ թագաւորի քարտուղար Կաս-
 « տրոցի Դիէգո Վէրրանդէզ-ի ու նոյն վեհափառ թագաւորի պալատին
 « վերատեսուչ Ապարիսիո Սանչէզ-ի՝ մեր մերձաւորներուն՝ — Կաս-
 « կած չունենալով անոնց կարողութեան վրայ — կատարեալ իշխա-
 « նութիւն կուտանք եւ փոխանորդ կը կարգենք զանոնք, հաւանելով որ
 « անոնք մեր անունով հպատակութիւն ուխտեն ու հաւատարմութիւն
 « յայանեն Հայոց թագաւորին՝ Մադրիդ քաղաքիս կողմէ, նկատելով
 « որ յիշեալ վեհափառ թագաւորն (Յովհաննէս Ա.) այս քաղաքն ընծա-
 « յեց Հայոց վեհափառ թագաւորին, մեր վրայէն վերցնելով քաղաքիս
 « կողմէ մեր վեհափառ թագաւորին ու իր առաջին գահաժառանգ զաւ-
 « կին՝ արքայազն տէր Ենրիկի՝ մեր յայանած հպատակութիւնը . եւ
 « այս հպատակութեան ուխտը յայանելու համար ի՛նչ որ կրնանք ընել
 « մենք՝ ներկայ անդամներս, եւ ի՛նչ որ թէ՛ ընդհանուր եւ թէ՛ մաս-
 « նակի կերպով կատարեն եւ հաւանին մեր փոխանորդները, անոնց
 « բոլոր ըրածներուն համամիտ ենք եւ երբեք չենք հակառակիր, հակա-